# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 24» հոկտեմբերի 2018 թ. N 252-Ա

## ԱՆՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 163-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Անուշ Պողոսյանի դիմումը՝

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 8-ը ներառյալ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները 2018 թվականի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 8-ը ներառյալ դնել առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սևակ Դվոյանի վրա:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:
4. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի նոյեմբերի 9-ին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ